Արձանագրություն N 2

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով թիվ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/44Շ ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

Մեկնարկ՝ «29» «նոյեմբերի» 2023թ.
ք. Երևան **Ժամը՝ 15:00**
Ավարտ՝ «15» «դեկտեմբերի» 2023թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ՝ (ԳՊ/ԳԱՊ)՝ Հ. Սեդրակյան

անդամներ՝

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Մ. Ստեփանյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Գ. Խեչումյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի պայմանագրերի կառավարման մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Մ. Մալխասյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմակերպական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)՝ Ա. Բաղալյան

1. Տեղեկատվություն՝ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/44Շ ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 **ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/44Շ** ծածկագրով բաց մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2023 թվականի նոյեմբերի 29-ին՝ ժամը՝ 15:00-ին:**

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք աշխատանքների գների վերաբերյալ

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների գները /գնվելիք աշխատանքների կատարման համար գնման հայտով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը/՝ մեկ թվով արտահայտված.

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	գնվելիք աշխատանքների կատարման համար գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/
1	**Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ116+790(կմ116+900)-կմ128+718(կմ127+900) հատվածի հիմնանորոգման աշխատանքներ**	**4 308 389 684**

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և էլեկտրոնային հասցեների հրապարակում

3.1. Հայտեր են ներկայացվել հետևյալ մասնակիցների կողմից

N	**Մասնակիցների անվանումները**	**էլ.փոստ**
1	«Ոսմար» ՍՊԸ	vosmar2022@list.ru
2	«Եվրոասֆալտ» ՓԲԸ	info@euroasphalt.am
3	«ՃԱՆԱՊԱՐՀ» ՍՊԸ	road@road.am
4	«Վասպուրականի ՃՇՇ» ՍՊԸ	vaspurakanjshsh@gmail.com.

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2023 թվականի դեկտեմբերի 13-ին 16:00-ին:

13.12.2023 թվականին, ժամը 16:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

4. Տեղեկատվություն՝ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

- «Ոսմար» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Ծավալաթերթ-նախահաշվում առկա էր անհամապատասխանություն:

Հանձնաժողովը *որոշեց.*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 13.12.2023թ-ին ընթացակարգը կասեցնել և առաջարկել մասնակցին ծանուցումը ստանալու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

15.12.2023 թվականին, ժամը 10:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

5. Տեղեկություն՝ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/44Շ ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման մասին

5.1 Ընդունել ի գիտություն, որ մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել է հայտերում առկա անհամապատասխանությունը:

6. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

6.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկներ են ներկայացվել հետևյալ մասնակիցների կողմից՝

Չափաբաժին 1

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	«Ոսմար» ՍՊԸ	2 627 800 000	525 560 000	3 153 360 000
2	«Վասպուրականի ՃՇՇ» ՍՊԸ	2 774 500 000	554 900 000	3 329 400 000
3	«ՃԱՆԱՊԱՐՀ» ՍՊԸ	2 775 000 000	555 000 000	3 330 000 000
4	«Եվրոասֆալտ» ՓԲԸ	2 832 500 000	566 500 000	3 399 000 000

6.2 Մասնակիցների հայտերի հաշվարկման ճշգրտությունը (տառերով, հայտում ներկայացված հայտերի համարներին արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաեւ հաշվարկի թվաբանական ճշգրտությունը համապատասխանում են (ճիշտ են):

7. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/44Շ ծածկագրով բաց մրցույթի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակից ճանաչել «Ոսմար» ՍՊԸ-ին:

7.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:

7.3 Հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Ոսմար» ՍՊԸ-ին:

8. Տեղեկատվություն՝ կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

8.1 Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Հ. Սեդրակյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Ա. Խաչատրյան**	.....
	Մ. Ստեփանյան	.....
	Գ. Խեչումյան	.....
	Մ. Մալխասյան	.....
Քարտուղար՝	**Ա. Բաղալյան**	.....